ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ

Սույն թվականի մարտի 10-ին իր հոգին Տիրոջ ձեռքերի մեջ ավանդեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռներից մեկի՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Երանաշնորհ Հայրը՝ Ամենապատիվ Պատրիարք Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճյանը՝ սուգի մատնելով Հայաստանյայց Եկեղեցուն: Շուրջ ութ տարի իմաստությամբ առաջնորդելով իրեն վստահված Թուրքահայ համայնքին, Կոստանդնուպոլսի 83-րդ Սրբազան Պատրիարքը մեկնեց աշխարհից՝ միանալու վերնական լուսաճեմ օթևանի մեջ բնակվող հայկյան անմահ կաճառին:

Ծնված և մեծացած լինելով ամուր կրոնական և եկեղեցական ավանդություններով հարուստ պոլսահայ միջավայրում և թրծվելով ու կազմակերպվելով Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանական կյանքում, իր քահանայական հիսունամյա ծառայության ընթացքում մշտապես եղավ Հայց. Եկեղեցու նվիրյալ ու ավանդապահ մշակը՝ իր ներդործուն մասնակցությունը բերելով Հայց. Եկեղեցու ծառայության դաշտի գրեթե բոլոր բնագավառներում՝ լինի հովվական, վարչական, թե կրթական:

Եկեղեցասիրության առաջին սերմերը նրա հոգում ցանվեցին դեռևս մանկության շրջանում, ընտանեկան միջավայրում. աղոթք էր հնչում մշտապես նրանց հարկից ներս: Վեցամյա Պետրոսը մոր կարած շապիկը հագին մասնակցում էր եկեղեցական արարողություններին, և մանկական հոգին լցվում էր Աստվածային ճշմարտություններով ու եկեղեցական ավանդություններով:

Մնվել է 1927 թ., Կոստանդնուպոլսում: Նախնական կրթությունը ստացել է Թուիդարուի Լևոն-Վարդուհյան և Պեզճյան Մայր վարժարաններում: Այնուհետև ուսումը շարունակել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում՝ Երուսաղեմի Հայոց միաբանության անդամ Մուշեղ վրդ. Հայրապետյանի՝ իր մոր հորեղբոր առաջարկությամբ: Եվ թեև մայրը կողմնակից չէր այդ տեղափոխությանը, սակայն ուսումնատենչ պատանին մի օր Պոլսից ճանապարհ ընկավ դեպ Երուսաղեմ՝ չմտածելով անգամ, որ այդ ճանապարհի վերջում իր համար մի նոր՝ աներևակայելի կյանքի սկիզբ պիտի դրվեր:

1945 թ., հաջողությամբ հանձնելով քննությունները, դառնում է Աստվածաբանության և փիլիսոփայության մասնագետ և նույն թվականին, ձեռամբ Կյուրեղ Պատրիարքի, սարկավագ է ձեռնադրվում և կոչվում ուսուցչական նվիրական գործի՝ Ժառանգավորացում և Ս. Թարգմանչաց դպրոցում: Հինգ տարի անց, 1950 թ., ձեռնադրվում է կուսակրոն քահանա և Երուսաղեմում վարում դիվանապետի պաշտոնը, ընտրվում է Ընդհանուր Ժողովի Բ Ատենադպիր և Տնօրեն Ժողովի անդամ:

Այս ժամանակ է, որ նրա կարիքը զգում են իր իսկ ծննդավայրում՝ Պոլսում. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյան Պատրիարքը նրան հրավիրում է վարելու ծրագրված և բացվելիք Ս. Խաչ Դպրեվանքի տեսչի պատասխանատու պաշտոնը: Նա առանց վարանելու վերադառնում է Պոլիս և մինչև Դպրեվանքի բացումը ուսուցչագործում Կեդրոնական և Պեզճեան վարժարաններում՝ միաժամանակ տնօրինելով Պատրիարքարանի քահանայից լարանները:

Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ՊԱՏՐԻԱՐՔԸ
(1927-1998)

1954-59-ԹԹ. վարում է նորաբաց Դպրեվանքի տեսչի պաշտոնը: Արդեն Գարեգին Ծ. վարդապետը Դպրեվանքում դասավանդում էր Հին և Նոր մատենագրություն:

Իր բազմաթիվ կրոնական և գրական հոդվածներով ու գիտական աշխատություններով թղթակցել ու հրատարակվել է ժամանակի հայտնի պարբերականներում ու թերթերում՝ «Սիոն», «Միածան», «Հայց. եկեղեցի», «Նոր Աշխարհ», ինչպես նաև այլ հրատարակություններում: 1952 թվականից խմբագրում է Պատրիարքարանի «Շողակաթ» պաշտոնաթերթը:

Վարդապետական աստիճան ստացել է 1950 թ.՝ «Զորս փոքր մարգարէները» վերտառությամբ թեզի հիման վրա: Իսկ Դպրեվանքի բացման օրը (1954 թ. հունվարի 22) Գարեգին Պատրիարք Խաչատուրյանը նրան տալիս է Ծայրագույն Վարդապետի աստիճան: Թեզն էր՝ «Ս. Ներսես Շնորհալիի ընդհանուր թուղթերը»:

Իր եռանդն ու գործունյա բնավորությունը փայլեցին նաև հովվական ասպարեզում: Նախ 1959 թվականին ստանձնեց Վաշինգտոնի (ԱՄՆ) հովվությունը, ուր ծավալեց եկեղեցական, կրթական, վարչական բեղուն գործունեություն, ապա, 1966 թվականին, ծառայության է կոչվում Ավստրալիայի և Հեռավոր Արևելքի շրջան՝ Հայրապետական Պատվիրակի հանգամանքով, և երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ձեռամբ ձեռնադրվում է եպիսկոպոս: Շուրջ տասնհինգ տարի ժրաջան աշխատանքով կարողացավ հաղթահարել նոր կազմվող գաղութի առջև ծառացած դժվարություններն ու խոչընդոտները: Նրան հաջողվեց 1968 թ. շրջանը վերածել Առաջնորդության:

Կարևոր ներդրում է ունեցել նաև եկեղեցաշինության ասպարեզում՝ 1962 թ. Վաշինգտոնում, 1972 թ. Սիդնեյում և 1976 թ. Մելբուռնում կառուցել է նոր եկեղեցիներ:

1981 թ. իր միաբանակից եղբայրների կողմից ընտրվում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության լուսարարապետ: Երկրից երկիր, մի պաշտոնից մյուսին տեղափոխվելն անգամ երբեք նրա մեջ չպակասեցրեց վանական կյանքով ապրելու ձգտումը:

Սակայն Աստվածային նախախնամությունը առավել պատասխանատու ծառայություն էր նախատեսել կազմակերպչական ունակություններ ու դժվարությունները հաղթահարելու աննկուն կամք դրսևորած եռանդուն հոգևորականի համար:

Ազգը գնահատեց նրան իբրև հավատարիմ մշակ և 1990 թ. ընտրեց Հայր Թուրքահայության՝ որպես Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսի:

«Կ. Պոլսոյ. պատմական Աթոռին վրայ երջանկայիշատակ Պատրիարքի ցուպը եղաւ ու մնաց ծաղկեալ, քանզի իր գահակալութեան ութ տարիները եղան արդիւնաւետ եւ պտղալից: Թուրքիոյ տարածքին վրա մեր ունեցած եկեղեցիներն ու համայնքային հաստատութիւնները մնացին չէն ու պայծառ»: Այս բառերով է բնորոշում Վեհափառ Հայրապետը Սրբազան Պատրիարքի վերջին տարիների գործունեությունը իր ցավակցական գրի մեջ:

Եվ իրավամբ, արժանիորեն բազմելով Հայց. եկեղեցու նվիրապետական Աթոռներից մեկին, նա ձեռնամուխ եղավ Աթոռի բարգավաճման ու դիրքի ամրապնդման, նոր հոգևորականների պատրաստման, նվիրապետական Աթոռների, ինչպես նաև քույր եկեղեցիների հետ սերտ հարաբերությունների մշակման բազմաճյուղ գործին: Նրան հաջողվեց պետական մակարդակով լուծում գտնել Թուրքահայ համայնքին հուզող բազմաթիվ խնդիրներին:

Անհրաժեշտությունից մղված, բազմաթիվ անգամներ իր բողոքի ձայնը հասցրեց թե՛ պետական ատյաններին և թե՛ միջազգային կազմակերպություններին՝ թուրքական կամայականություններից զերծ պահելու և՛ Պատրիարքությունը, և՛ համայնքը, և՛ համայնքապատկան կալվածքները, եկեղեցիները, վանքերն ու պատմական հուշարձանները: Իր Պատրիարքության շրջանում ձեռնարկել է պատմական բազմաթիվ եկեղեցիների բարեզարդումն ու նորոգությունները: Նա իր ուշադրության կենտրոնում պահեց կրթական և ուսուցման մակարդակի բարելավման գործը: Միջոցներ հայթայթեց վարժարաններին մշտական եկամուտներով ապահովելու նպատակով:

«Մեր սիրեցեալ եղբօր գործերը երկար ատեն պիտի յիշուին: Պիտի չմոռնանք զինքը, իր զուարթախօս, զուարճալի, հաղորդական, ընկերասէր նկարագիրը»: Այս բնորոշումներով էր ճանապարհում ի Քրիստոս իր սիրեցյալ եղբորը Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպիսկոպոս Զինչինյանը՝ դամբանական կարդալով Սրբազան Պատրիարքի անկենդան մարմնի առջև:

Սրբազան Պատրիարքի բարձր հեղինակության և տարբեր շրջանակներում վայելած հեղինակության վկայություններ էին բազմաթիվ ցավակցական գրերն ու հեռագրերը իր վախճանման առիթով՝ Հայց. Եկեղեցու Նվիրապետական Աթոռներից, քույր եկեղեցիների պետերից և տարբեր պետությունների ղեկավարներից:

Սգում է պոլսահայությունը, սգում է հայ ժողովուրդը, որովհետև ոչ ևս է իր անձնդիր Պատրիարքներից մեկը, որովհետև ասդենական կյանքում նրա մշտազվարթ, անբիծ ու խորաթափանց նկարագիրը վայելելու հաճույքը չի ունենալու այլևս:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր սգակցությունն է հայտնում Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությանը և աղոթում Բարձրյալին, որ Իր լուսավոր օթարաններում ընդունի Սրբազան Պատրիարքի հոգին:

Աղոթում ենք, որ Տերը Աստվածարարյալ Գարեգին Պատրիարքի նման բազմապիսի շնորհներով օժտված Պատրիարք բազմեցնի Հայց. Եկեղեցու Նվիրապետական Աթոռին, և սգաքողը վերացվի պատրիարքական գահից:

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ